ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՑՈՆԻ

Ողբերգութենէ Ադելքեայ

Մահ Էրմէնգարդայ արձակելոյ կնոջ Մեծին Կարոլոսի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ցամին 770, այրին Պեպինոսի արքայի Գաղղիոյ՝ Բերտրադա, ըղձացեալ խնամութիւն առնել ընդ տանն Դեսիդերիոսի՝ արքայի Լոնգոբարդաց, ընդ որում դժգմեալ էր Գաղղիա վասն յափշտակութեանց ինչ քաղաքաց, գայ յիտալիա, և առաջի առնէ երկուս ամուսնութիւնս., այն է Դեսիդերատայ կամ Էրմէնգարդայ՝ դստեր Դեսիդերիոսի՝ ընդ միում յորդւոց իւրոց, և Գիսլայ դստեր իւրոյ՝ ընդ Ադելքեայ եղբօր Էրմէնգարդայ։ Քահանայապետն Ստեփանոս Գ., որ և նա խռովեալ էր ընդ գնացս Դեսիդերիոսի, հաշտակաւոր թղթով միով հնարի համոզակեր լինել արքայից Գաղղիոյ Կարոլոսի և Կարլոմանոսի յետս կալ յայսպիսի ազգակցութենէ։ Սակայն և այնպէս, Բերտրադա ածէ ընդ իւր 'ի Գաղղիա զԷրմէնգարդա, և Կարոլոս, որ ապա կոչեցաւ Մեծն, առնու զնա 'ի կին։

Այլ ոչ է յայտ ստուգիւ եթէ վասն էր արձակէ ապա զԷրմէնգարդա, և կին ածէ զՀիլդեգարդէ յազգէ Շուեսացի։ Մայր Կարոլոսի Բերտրադա՝ ոչ հաճեցաւ ընդ այն։

Այս է պատմութիւն Էրմէնգարդայ՝ զոր առաջի առնէ քերթողն յերկուս միայն տեսիլս յԱդելքի Ողբերգութեան, որ և չունի ինչ մասն ամենևին ընդ ընթացից գործոյն, և յեռեալ է 'ի նոյն՝ վասն արհամարհ ցուցանելոյ կամ ստգիւտ բերելոյ անուան և բարուց Մեծին Կարոլոսի։

Վայելուչ էր մեզ յետ ողորմօրհնասի Կատարինեայ զչխոյի կնոջ Հենրիկոսի Ը., ընծայել և զայս, որ նորին վիճակեալ՞ թշուառութեան, և զրեթէ հաւասար

digitised by A.R.A.R.@

վսեմ հանդիպեալ հանճարոյ ողբերգողի՝ յանդիման լինի մեզ իբրև անմեղ որ ա-
զօթելով մեռանի, ձգեալ ածեալ ընդ իւր զսիրտս տեսողաց և լսողաց սրտառուչ
և հզօր իմաստից դիւթութեամբ։

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ Գ

Պալատ Արքունի 'ի Պաւիա

Դեսիդերիոս, Ադելքի, Վերմունդոս, որ յառաջէ քան զԷրմենգարդա,
Օրիորդք, որք ընկերեն նմա։

Վերմունդոս

Քաջ սրանց Տեարք, աւասիկ Էրմենգարդա։

Դեսիդերիոս

Ե՛կ, դուստր իմ։
Քաջալերեաց։ (Վերմունդոս մեկնի, Օրիորդքն հեռանան)։

Ադելքի

Ի մէջ գլուկաց եղբօր քում կաս, ու առաջի հօր։
Ի միջի հին մխիթարմաց քոց. յարքունիս ես արքայից,
Եւ 'ի քո իսկ, առաւել ևս մեծարեալ և սիրուն
Քան յորժամ մեկնեցարդ։

Էրմենգարդա

Ո՛վ երջանիկ ձայն իմոցս։
Հայր, եղբայր. երկինք՝ բանիցս այս հատուցցեն փոխարէն.
Երկինք միշտ ձեզ լիցի բաժին, զոր օրինակ եղերուք դուք
Ինձ ձերումդ եղկելոյ։ Ո՛հ, եթէ ինձ օր մի զուարթ
Էր ծագելոց, այս իսկ իցէ, յորում ըզձեզ տեսանեմ։ —
Ո՛հ մայր անուշակ. ըզքեզ թողի աստանօր.
Զվերջին բանըս քո ես ոչ լուայ. դու մեռար աստ — և ես։ . .
Ո՛հ, անշուշտ 'ի բարձանց հայիս 'ի մեզ արդ. ո՛հ, տես
Զքոյինդ այն Էրմենգարդա, զոր ձեռամբ քով պըճնեիր
Ցաւուրն յայնմիկ, մեծաւ զբթով և հրճուալից ցընծութեամբ,
Ում ըզհերսն յաւուրն յայնմիկ քո իսկ ձեռամբ փոքրեցեր,
Տես, որպէս արդ դարձ առնէ. և օրհնեա զքո սիրելիս,
Որ այսպէս ժողովեցին զիս ըզբաւչէի թողի եղեալս։

digitised by A.R.A.R.@

Աղելքի

Ո՛հ, մեր են ցաւք քո, մեր կորանք քո։

Դեսիդերիոս

Եւ մեր հոգ լիցի վրէժն։

Էրմենգարդա

Հայր, ոչ ցայդ վայր ցաւք իմ խընդրեն. մոռացութեան լոկ ցանկամ.
Եւ աշխարհ կամակարուց պարգևէ զայն եղկելեաց.
Ո՛հ, շատ է, թող հիքութիւն իմ յիս վախճան առնուցու։
Ինձ պահեալ էր լինել սերտ մրտերմութեան և հաշտութեան
Նշանակ անտրխեղծ։ Զեղև երկնից այն հաճոյ,
Ա՛խ, դէթ մի ասիցեն, եթէ բերի ես ընդ իս,
Ուր ուրեք երևեցայ, կաղ գրժտութեան և ողբումն,
Ամենեցուն՝ որոց կայի լինել գրբաւ ցընծութեան։

Դեսիդերիոս

Մի եթէ վրշտանայցես ընդ պատուհաս ամպարշտին։
Զվատշբուէրն այն անարգ սիրիցես դու տակաւին։

Էրմենգարդա

Ո՛վ հայր, զի որոնեալ յուզես ըզխորըս սըրտիս։
Ո՛հ, ոչ ինչ եւցէ անտի՝ որ զքեզ ուրախ արասցէ.
Եւ ես ինքըն գըլխովին խիթամ ըզնա հարցանել.
Ամենայն ինչ որ էանց, ունայն մնոտի է վասն իմ։ —
Հայր, չընորհ մի յետին հայցեմ 'ի քէն. յարքունիս յայս,
Ցոր աճեցի յուսով պըճնեալ, 'ի գիրկըս մոր այնպիսւոյ,
Զինչ առնել ինձ կայցէ։ Գրսակ երբեմն ակնահաճոյ,
Առ խաղ ինչ եդեալ 'ի գլուխ յաւուր միումն տօնականի,
Եւ վսկ և իսկ առաթուր անցաւորին ընկեցեալ։
Առ սըրբազանն այն՝ ապաւէն խաղաղութեան և գրթոյ,
Զոր երբեմըն կառոյց քո մեծարոյ ամուսին,
— Գոգցես կանխագուշակ — ուր և քոյրն իմ սիրանունդ,
Երանի՛ նրմա, որ ուխտ ընդ փեսային եդ այնպիսւոյ՝
Որ համբուն ոչ զոք մերժէ, թող զի և ես դիմեցից։
Այնմ ամբիծ հարսանեաց յուսալ ոչ ևս է ինձ մարթ,
Կապելոյս այլով զոդիւ. այլ մարթ է դէթ անտեսաբար
Զաւուրս իմ անդէն կընքել։

digitised by A.R.A.R.@

Ադելքի

Զայդպիսի քո իղձ՝ հողմք տարցեն.
Կեցցեմ դու. քանզի չետուն երկինք ըզկեանըս լուաց
Ի հաճոյս չարագործաց. ոչ են նոքա ձեռընհաս
Խամրել զամենայն յոյս, զուրախութիւնս ամենայն
Ցոչխարհէ 'ի բաց բառնալ։

Էրմենգարդա

Ո՛հ, իցիւ թէ բնաւ երբէք
Զափունըս Տիկինեայ Բերտրադէի չէր տեսեալ.
Իցիւ բնաւ նըւոյ միոյ Լոնգոբարդեան յարենէ
Չէր տենչացեալ ազնուագութն այն, և ոչ զայս իւր յիս արկեալ։

Դեսիդերիոս

Վրէժխընդրութիւն, քանիցն դանդաղիցես ժամանել։

Էրմենգարդա

Գտանիցեն աղաչանք իմ առաջի քո չընորհս։

Դեսիդերիոս

Խընամոտ խորհրդատու միշտ եղեն ցաւք՝ քան ըզգօն,
Եւ ժամանակն՝ անակընկալ բերող հոգոց ա՛արկածից։
Եթէ ոչ ինչ 'ի քոյոցըդ խորհրդոց փոխիցէ նա,
Դըստերդ իմ ինչ ոչ ժրխտեցից։

ՏԵՍԻԼ Դ

Անփրիդոս և Նոյնք

Դեսիդերիոս

Զինչ բերես, ով Անփրիդոս։

Անփրիդոս

Պատգամաւոր ոք, տէր արքայ, հաս յարքունիս, և խընդրէ
Զի տացի նմա լինել արքայազանցդ յանդիման։

Դեսիդերիոս

Ուստի գայ, կամ ո՞ յըղէ։

digitised by A.R.A.R.@

Անփրիդոս

Ի Հռովմայ գայ, այլ հրեշտակ
Աղքայի է ուրուք։

Էրմէնգարդա

Թոյլ տուր ինձ, հայր, մեկնել աստի։

Դեսիդերիոս

Ո՛վ կանայք, 'ի սենեակսըն իւր տարէք ըզդուստրն իմ.
Ի սպասու ծառայութեան նորին ըզձեզ կարգեցի.
Զդըշխոյի կայցի նա փառաց պատիւ և զանուն։
(Էրմէնգարդա մեկնի ընդ Օրիորդսն)։

ՀԱՆԴԷՍ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա

Պարտեզ 'ի մեհնաստանի Սրբոյ Փրկչին 'ի Բրեշիա. Էրմէնգարդա, յետեալ յերկուս օրիորդս, և Անսբերգա։

Էրմէնգարդա

Ընդ հովանեաւ լուրեացս աստ։ (ի կողմն լինի 'ի բազմոցի)։
Զիա՞րդ քաղցր է և անոյշ
Ճառագայթս այս գարնանոյ, ինքը փարի զսաղարթուք։
Այժմ իմանամ եթէ զիարդ անձկով խընդրէ զարեգակն
Այն որ ամաք ծանրացեալ ըզգայ զկենացըն փախուստ։
(Առ Օրիորդս)։ Շնորհ ունիմ ձեզ, ձեզ որ նեցուկ կայք կրթուցեալըս կողից,
Եւ օժանդակ եղէք ըզձից զոր ըզձացայ ես այսօր։
Բոլորիլ միւսանգամ ևս աղատ օդովքս այս Մելլայ
Զոր նախ չընչեցիս. ընդ երկնիւքս իմ նըստել ինձ,
Եւ տեսանել զայն բովանդակ՝ ցոր վայր և աչք Նըչմարեն։
— Ո՛վ քաղցրը քոյր, ով տիրանուէր մայր՝ ով գրթիոտ Անսբերգա։
(Կարկառէ զձեռն առ նա. Օրիորդք մեկնին, բազմի Անսբերգա)։
Հոգոց քոց և իմ վըշտաց ահա մերձեալ է փախման։
Ո՛հ, չափով բաշխէ Տէր զայնս։ Ըզգամ հանգիստ իմըն խանչ
Կարապետ գերեզմանի, մանկութիւնս այս իմ ընկճեալ
Ոչ ևս այլ պատերազմի ընդդէմ ժամուն Աստուծոյ.
Եւ մեղմով քաղցրաբար, առաւել քան ըզկարծիս՝
Հինօրեայ 'ի ցաւս հոգիս՝ 'ի կապանացըն ղերծանի։

digitised by A.R.A.R.@

Զյետին հայցեմ այժմ 'ի քէն շնորհս, միտ դիր բանիցըս կարեւոր,
Լուր զուխտս 'ի մահ մերձեցելոյս, պահեա զնոսա 'ի սըրտի,
Եւ սուրբ հաստ յաւուր միում որոց յերկրի թողում ես։
— Մի՞ խռովիր, ով սիրելի. ո՛հ, մի՛ յիս հայիր այդպէս վըհատ.
Զիմանաս, զի այս գութ Տեառն է։ կամէի՞ր թողուլ զիս
Ցերկրի՝ ցօրն յորում վերայ յարձակեցին Բրեշիայ,
Մինչև սոսկ ոք այդպիսի հասեալ գայցէ մերձեցի՞.
Եւ յայսպիսի անպատում տանջանս կայցէ՞ զիս աստէն։

Ամսբերգա

Մի՛ զանգիտեր, սիրելի չըւառական, տակաւին
Զէնք հեռի են դեռ 'ի մէնջ. Ընդդէմ Վերոնայ և Պաւիայ,
Ապստամբին արքայից և մարդկան հաւատարմաց,
Ամբարիշտն 'ի գործ վարէ զամենայն զիւր զօրութիւն,
Այլ ակն ունիմ 'ի Տէր Աստուած զի նկուն եղիցի։
Քեռորդին մեր ազնուական քաջայանդուգըն Բաւդոս,
Ընավալտ սուրբ եպիսկոպոսն, ըշպարըսպօքս այսոքիւք՝
Խըմբեցին զպատերազմողըս բնակեայ և զձորոց.
Եւ անյողդողդք կան գօտէպինդք մինչև ցըմահ պաշտպանել։
Վերոնա և Պաւիա եթէ անկցին կործանեալք,
(Մի՛ արասցէ Տէր,) Նոր երկար կըռիւ. . .

Էրմէնգարդա

Ես ոչ տեսից զայն.
Ցերկրաւոր սիրոյ քակեալ և յամենայն երկիւղէ,
Մեկուսի գըտայց ես 'ի գըժընդակ այդմ յուսոյ.
Վասն հօր իմոյ աղօթեցից, վասն Ադելքեայ սիրելւոյն,
Վասըն քո, վասն այնոցիկ որք նեղին և որք նեղեն,
Վասըն բնաւից։ — Միտ դիր արդ յիշողութեան իմ վերջին։
Ամսբերգա, հօրս և եղբօր, յորժամ տեսցես ըզնոսին —
Ո՛հ, մի՛ լիցի ձեզ զըրկել ցընծութենէս յայսմանէ, —
Ասասցես, եթէ մերձեալ 'ի հուսկ կենաց կատարած,
Ի կեանս՝ յորում ամենայն ինչ 'ի մոռացօնս անկանի,
Պահեցի քաղցըր և հաճոյ ըղձիչատակ աւուրն այն՝
Մարդասէր գործոյն, յորժամ առ. դողդոջունս և տարատամն
Զկորովի և զդըթալիր կարկառեցին ձեռս առ իս,
Եւ զբարձի թողի եղեալըս ոչ յամօթ արարին.
Ասասցես, եթէ աղօթք իմ ամբարձան ջերմ և անդուլ,
Առ աթոռ Տեառն Աստուծոյ՝ վասն յաղթութեանըն նոցին.
Եւ թէ նա ոչ լըսիցէ, մեծ իմն անշուշտ կայ խորհուրդ

digitised by A.R.A.R.@

Խորագոյն ևս գրթութեան, և զ' 'ի մահուան անդ իմում
Օրհնեցի զնոսին։ — Ապա, քոյր... ահ, ինձ մի զլանար զայս...
Դիտ զայր ոք հաւատարիմ, որ երբ կամ ուր և իցէ,
Առ ահեղն այն թշնամի ազգիս մերձեալ...

Ալնաբերգա

Առ Կարլոս։

Էրմենգարդա

Դու ինքն ըզնա անուանեցեր, և ասասցէ նմա զայս.
Անցանէ Էրմենգարդա առանց քինու ինչ վրիժուց,
Եւ ոչ ինչ 'ի յերկրի ատելութեան թողու խէթ.
Եւ յաղագս սակաւուն զոր կրրեաց, զՏէր թախանձէ,
Եւ յուսայ՝ եթէ ոչ պահանջեսցի ինչ համար,
Զ' 'ի ձեռաց անտի նորին նա զամենայն ընկալաւ։
Զայս նրմին ասասցէ, և... թէ ոչ կարի դառնալուր
Ունկանըն խրստամբակ հասանիցէ բարբառս այս...
Թէ, ներելով թողում նրմին։ — Խոստանայցես առնել զայս։

Ալնաբերգա

Զվերջին բանս իմ կալցին երկինք, որպէս ինձ սուրբ են քոյրդ այդ։

Էրմենգարդա

Սիրելիդ, և վասն այլոց իրիք ըզքեզ աղերսեմ.
Մարմնոյս այսմ՝ որում խընամ տարար գրթով այսքանեաւ,
Մինչ գոյր 'ի սմա չունչ կենդանի, քեզ մ'ի սոսկումն լիցի
Եւ զյետին տանել խընամ. Ամենիսեան զայն յանդորրս։
Մատանիս այս զոր 'ի մատն իմ յահեկի տեսանես,
Ընդ իւր մնացէ 'ի ափոր. առ սեղանովն ինձ տուաւ այն
Ցանգիման Աստուծոյ։ Անշուք լիցի ատիրն իմ. —
Փոչի եւք ամենեքին. ես իւ իւիք պարծեցայց. —
Ալլ սակայն կրրեացէ նա զորէնս պատուոյ դշխոյի,
Կապ մի սուրբ զիս դշխոյ արար, և քաջ իսկ գիտես,
Զի զպարգևս Աստուծոյ կապտել ոչ ոք կարասցէ.
Եւ որպէս կեանք՝ հարկ է թէ այդքամ և մահ իսկ վկայեսցէ։

Ալնաբերգա

Ո՛հ, 'ի քաց տար 'ի քէն զպաւագին զայդ յիշատակս. —
Հան 'ի գլուխ ըզդոհրն, լուր. պեղուցս այսմիկ ապաւինի

digitised by A.R.A.R.@

·Ցոյ Աստուած էած ըզքեզ պանդուխտ, լեր արդ քաղաքացի.
Եւ քո եղիցի յայսմ հետէ քոյին հանգըստեան տուն.
Ըզգեցի՛ր ըզսուրբ սըքեմն, և ընդ նըմին ըզհոգին,
Եւ մոռա՛ ըզմարդկեղէնըս ամենայն.

Էրմէնգարդա

Անսբերգա,
Զի՞նչ ըզնես առաջի իմ, զի սըտեցի՛ց ես առ Տէր.
Զմըտա՜ւ ած զի յանդիման եղեց նըմա հարսնապէս.
Հարսն անապական, սակայն մարդոյ մահացուի. —
Երանի՜ ձեզ, երանի ամենեցուն, որք ըզսիրտ
Մատուցին արքայից արքային զերծ 'ի հողոց,
Եւ ըզքօղըն նուիրական զաչօք իւրեանց իջուցին,
Մինչև յառեալ յերես մարդոյ. — Այլոց եմ ես.

Անսբերգա

Իցէ՞ւ չէի՛ր.

Էրմէնգարդա

Ո՛հ, մի՛ այդպէս. ըզչաւիղն, յոր կացուցին զմեզ երկինք
Հատանել հարկ է ողջամբ, որ զի և է, մինչ 'ի սպառ.
Եւ եթէ 'ի գոյժ մահուան իմոյ նորոգ իմըն խորհուրդ
Սորըրջանաց և գըթութեան յորդորեսցի՛ն 'ի սիրտն այն.
Թէ անազան ինչ զըղջմամբ, այլ տակաւին քաղցունեի,
Ըղձըշխարքըդ ցըրտագին խընդրեսցէ՛ նա իբրև իւր
Արքունի շիրմին 'ի դիր. նընջեցեալք, ո՛վ Անսբերգա,
Է զի զօրեղագոյնք քան զկենդանիս գըտանին.

Անսբերգա

Ո՛հ, նա զայն ոչ արասցէ.

Էրմէնգարդա

Դո՛ւ բարութեան այնորիկ
Դո՛ւ, ո՛վ ազնըւագութ, արկանես սանձ անարգու,
Որ շարժէ ըզսիրտ մարդոյ, որ ախորժէ, զի իւր շնորհօք
Ի զարման նախատանացն, այն որ արար, եկեսցէ.

Անսբերգա

Ոչ, թըշուառ դու, նա ոչ արասցէ զայդ — Ոչ իսկ կարէ

digitised by A.R.A.R.@

Էրմէնգարդա

Զիա՞րդ, առ իմէ՞ ոչ կարիցէ՛։

Անսբերգա

Սիրունդ իմ,
Մի՛ հարցաներ անդրագոյն նըս, մոռացի՛ր։

Էրմէնգարդա

Օ՜ն, խօսեաց.
Մի՛ այսու երկբայութեամբ զիս 'ի տապան առաքեր։

Անսբերգա

Ո՛հ, զծղեան իւր ամպարիշտն 'ի գլուխ եհան։

Էրմէնգարդա

Ասա՛. զի՞նչ։

Անսբերգա

Մերժեա՜լ 'ի ոլըրտէ քումմէ բնաւին զնա 'ի բաց.
Ցանցեաւ նա վերըստին նոր անօրէն հարսանեօք.
Անամօթն 'ի մարդկանէ և յԱստուծոյ ակն յայտնի,
Զօրէն յաղթանակի, 'ի բանակն իւր ածեալ ձըգէ
Զիւրըն զայն Իլդէգարդէ... (Էրմէնգարդա նուաղի)։
Թալու՜կն ըզքեւ գայ, Էրմէնգարդ.
Ո՛չ լըսես ինձ։ Ո՛վ երկինք. փութացարուք, քորք, ընթացէք։
Ո՛հ զի՞նչ արարի։ (Մտանեն երկու Օրիորդք և այլ քորք)։
Ո՛հ, ո՛ ներմին օգնեսցէ։
Տեսանէք. ցաւ իւր առնէ զնա կըտտամահ։

Առաջին քոյր

Զօրացի՛ր։
Շընչէ նա։

Երկրորդ քոյր

Ո՛վ եղկելի, յայդըմ տիոց հասակի,
Ցայնպիսի տեղւոջ ծընեալ, և այսգունակ չարչարիլ։

digitised by A.R.A.R.@

Օրիորդ ումն

Ո՛վ տիկինդ իմ անուշակ։

Առաջին Քոյր

Ահա բանայ զաչս 'ի լոյս։

Անսբերգա

Որպիսի՞ հայեցուածք։ Ո՛վ երկինք, զի՞նչ լինիցի։

Էրմենգարդա (Ի ցնորս)։

Ի բաց վրտարեցէք զկինքն զայն, ով զինակիրք։
Ո՛հ, ոչ տեսանէք թէր համարձակ յառաջէ.
Եւ զարբային ձեռս հրնարի ունել։

Անսբերգա

Սթափեաց. ով Աստուած.
Մի խօսիր այսպէս, զգաստացիր, թող անդր 'ի բաց ըզցնորսդ.
Կարդա զանունքն սուրբ։

Էրմենգարդա

Կարդալոս, մի տար թոյլ այդմ.
Զահաւոր քո զայն աչաց ըզհայեցուածն արկ 'ի դա.
Եւ իսկոյն փախնուցու. ես ինքնին, ես հարսքն քո,
Եւ ոչ 'ի խորհուրդս իսկ մրտաց երբեք մեղապարտ,
Ոչ կարեմ նրշմարել առանց բնաւին խռովելոյ։ —
Ո՛վ երկինք, զի՞նչ տեսանեմ. դու ինքն առ նա ծիծաղես։
Ա՛խ, մի, դադարեա յանադորուն կատակէդ.
Ցաղնապէ տանջէ զիս, ոչ հանդուրժեմ ես այդմիկ։ —
Մարթ է քեզ, ով Դարոլոս, մեռուցանել զիս ցաւովք.
Այլ զի՞նչ քեզ անտի փառք։ Ցաւեսցէ այդ երբեմն և քեզ։ —
Սոսկալի է սէր իմ, դու տակաւին ոչ գիտես։
Ո՛հ, դեռ քեզ ոչ յայտնեցի զամենայն. դու իմ էիր.
Անվրդով յուրախութեան իմում ես լուռ ևեթ կայի.
Եւ համբուն ոչ ժըտէին պարկեշտ շրթունքս այս ասել քեզ,
Զանխուլ սրբոյն իմոյ զարբեցութիւն բովանդակ։
— Աղաչեմ, հալածեա զդա։ Ցես, երկրնչիմ 'ի նմանէ
Որպէս յօձէ իմեքէ, սպանանեն զիս աչք դորա։ —

digitised by A.R.A.R.@

Միայն եմ ես և տըկար. չիցես միակ իմ դու մտերիմ.
Եթէ եղէ քո, եթէ հաս ինչ լինել քեզ քաղցրութիւն,
Ո՜հ մի՛ զիս ստիպեր այսպէս մատուցանել աղաչանս
Առաջի ամբոխիս այս որ զինև ծաղր առնէ ...
Ո՜վ երկինք. նա խոյս տայ 'ի բազուկս իւր ... մեռանիմ ես ...

Անսբերգա

Ո՜հ, և ընդ քեզ ինձ մեռանել տացես.

Էրմէնգարդա

Ո՞ւր է Բերտրադա,
Ըղձացցրիկն այն ըզըղթոտըն ես կամիմ Բերտրադա.
Ասա ինձ, գիտիցես զայդ դու զոր ես նախըն տեսի,
Զոր նախկին սիրեցի ես յայսըմ տանէս, գիտիցես զայդ.
Ընդ թըշուառս ընդ իս խօսեաց. ատեամ ըղձայն բարբառոյ
Ամենայն մահկանացուի. այլ 'ի տեսիլ քոյ դիմաց,
Այլ 'ի բազուկս քո գըթալիրըս ես ոգի կըլանեմ,
Խընդութիւն իմըն դառըն որ սիրոյ նըմանէ.
— Թող ինձ ընդ քեզ հայել, թող ինձ նըստել մերձ առ քեզ . .
Կարի պարտասեալ եմ. Առընթեր քո կամիմ կալ,
Կամիմ թանգուզել զերեսս 'ի գիրկըս քոյին
Եւ հեղուլ արտասուս, ընդ քեզ կարեմ արտասուել.
Ա՜խ, մի՛ մեկնիր. խոստացի՛ր ինձ չըխուսափել առ յինէն.
Մինչև ես արտասուօքս իմովք ելից արբեցեալ.
Ո՜հ, չըմնայ քեզ համբերել ինձ ընդերկար. զիս շատ սիրեցեր.
Ո՜հ, քանիս 'ի միասին աւուրըս զուարթս անցուցաք.
Յիշիցես դու. ընդ լերինս անցաք ընդ գետս և 'նդ անտառս.
Եւ աճէր առ ամենայն այդ ցընծութիւն արթնութեանս.
Ո՜հ, աւուրք, ո՜հ, մի՛ մի՛ խօսիր ըզնոցանէ՝ աղերսեմ.
Գիտեն երկինք՝ եթէ ըզսիրտ մահկանացուի կարծէի
Եթէ այնքան բերկրութիւն և այնքան վիշտըս տանիցի.
Արտասուես դու ընդ իս. Ո՜հ, ըսփոփե՛լ զիս կամիս.
Կարդա՛ զիս դուստըր քո. 'ի յայս անուն ըզգամ ես
Նեղութեանց իմոց լըրումն, որ ըզսիրտ իմ ողողէ,
Եւ արկանէ 'ի մոռացմունս. (Վերստին անկանի).

Անսբերգա

Մեռանէր նա խաղաղիկ.

digitised by A.R.A.R.@

Էրմէնգարդա ('ի ձայնս)

Իցիւ թէ էր երազ, և այգ փարատէր զայն իբրև մէգ ·
Եւ ես զարթնուի արտասուաթուրմ, վըշտագին,
Եւ զպատճառն այնորիկ հարցանէր զիս Կարոլոս,
Եւ կըշտամբէր զիս, ժըպտելով, թերահաւատ իբրու գոլ ։
(Անկանի 'ի թմբրութիւն) ։

Անսբերգա

Ո՛վ Տիրուհի երկնից, հաս 'ի յօգնութիւն թախծելոյս ։

Առաջին Քոյր

Ո՛հ, տես, անդորրութիւն դառնայ 'ի դէմըս նորին ·
Ոչ ևս այլ ընդ ձեռամբ սիրտ իւր տրոփեալ դողդոջէ ։

Անսբերգա

Էրմէնգարդա՛, Էրմէնգարդա՛, քոյր ։

Էրմէնգարդա ('ի միտս եկեալ)

Ո՞ է որ զիս կոչէ ։

Անսբերգա

Հայեաց յիս, ես եմ Անսբերգա · օրհորդք քո կան զքև շուրջ ·
Ակնուածութ քոյրք, որ վասըն քո խաղաղութեան աղօթեն ։

Էրմէնգարդա

Օրհնեսցէ ըզձեզ երկինք ։ — Ո՛հ, արդարև, են դոքա
Երեսք խաղաղութեան և մըտերիմըն սիրոյ ։
Զարթնում յահեղ երազոյ ։

Անսբերգա

Ա՛յ հէք ։ Խռովալից անդորրութիւնդ.
Աշխատութիւն առաւել քան թէ հանգիստ քեզ եբեր ։

Էրմէնգարդա

Ստոյգ է. Նուաղեալ է բնաւին շունչ ։ կանգնեամ զիս, ո՛վ սիրելի ·
Ի մահիճս իմ մըտերիմ ածէք զիս դուք, ո՛վ քարեմոյնք ·

digitised by A.R.A.R.@

Ցեռլին է այս վաստակ աշխատութեան զոր տամ ձեզ,
Այլ Թըւեալ է ամենայն յերկինս: — Մեռցուք յանդորրու.
Խօսեցարուք ինձ զԱստուծոյ, որ՝ ահա զգամ զի հասեալ գայ:

Պար

Սըփռեալ գլանջօք վըշտաքեկ
Ըզհիւս վարսիցըն կակուղ,
Ջեռըն յամբաշարժ, ցօղաթուրմ
Սպիտակ դիմօք մահատիպ,
Անկեալ դընի գըթածն այն
Նուաղկոտ աչօք պիշ յերկինս:

Կարեկցութեան լըռեն ձայնք.
Մատչին աղօթք միաշունչք.
Ծըրտասառոյցն 'ի ճակատ
Կարկառեալ, ձեռքըն թեթև
Ըզկապուտակըն բըքօք
Ածեալ ձըգէ զքօղն յետին:

Մերժեալ 'ի մտացդ հոգածու
Ջերկրաւոր իղձս, ով ազնիւ.
Խորհուրդ մ'ամբիծ նուիրաձիր
Հայն առ Անմահն, և մեռիր.
Քոյոց երկար կըտտանաց
Ի հանդերձեալն է փոխճան:

Այսպէս յաստիս անօղօք
Ճակատագիր էր հէքոյն.
Մոռացութիւն միշտ խընդրել
Եւ երբեք ոչ ընդունել.
Ի'առ Տէր սըրբոց եղանել
Վըշտօք իւրովք եղեալ սուրբ:

Ա՜յ, 'ի յանքուն խաւարի,
Մենարանին յամայուոջ,
Ի նուագս երգոց կուսանաց,
Առ մաղթանաց սեղանօք,
Ի յուշ գային հանապազ
Անդարձականքըն այն աւուրք.

Մինչ դեռ սիրուն, և անփորձ

digitised by A.R.A.R.@

Հաւատադրուժ ապառնոյն,
Ըզկենսակիր շընչեաց օդ
Զմայլմամբ՝ ափանց փառնկական,
Եւ 'ի հարստունս Սալիքեան
Նախանձելի խառնեցաւ.

Մինչ յերկնաբերձ 'ի գարէ,
Խարտեաշ հերօք ակնայեռ,
Զվազս 'ի դաշտին տեսանէր
Պընդելոցն յորս մեծափոյթ,
Ի' ի սանձարձակ յերասանս
Կըքեալ զարքայն վարսագեղ.

Եւ զհետ նորա մոլեգին
Վառեալ ըղձիս փըրփրերախ.
Եւ զերթուղարձ շընչասպառ
Ցիր բարակաց արագուն.
Եւ 'ի հերձեալն երագող
Ջելս թաւամազ վարազուն,

Ի'արիւնոտ թաթաւել
Սըմբակակոխ ըզփոշին՝
Ցարքայական 'ի փըքնէ.
Եւ իսկ և իսկ ըզդէմս իւր
Առ օրիորդսըն շըրջէր
Սիրուն ահիւ տըխատեալս։

Ո՛վ Մուսա թափառոտ,
Ո՛վ Կրանեան եղկ լըդալրանք,
Ցոր զահեղ վերստ հոլոնեալ
Մարտակըռիւ թագաւորն՝
Ի բանակէն իջանէր
Սըրբել ըզքիրտն աշխատական։

Զոր օրինակ շաղ ցօղոյ
Ի թառամեալ դալարիս՝
Զով զով ընդ սօսըն հրակէզ
Գնացուցանէ զկենաց հիւթ,
Որով անդրէն դալարուս
Ցառնեն 'ի մեղմ արշալոյս.

Այսպէս 'ի միտսըն, զոր մաշեա

digitised by A.R.A.R.@

Նեղէ սիրոյ զօրութիւն,
Մըտերմական ինչ բանիւ
Իջանէ սիւդ անդորրիչ,
Սփոփելով զսիրան յայլ սիրոյ
Յանդորրաւէտ ցընծութիւնս։

Այլ երբ արև վերադարձ
Ընդ զառիվերն առաջէկ,
Անհատահոս փայլակմամբ
Այրէ կիզու զօդն անշարժ,
Զայն ինչ կանգնեալ ըզցօղունս
Ցերկրի անդրէն խարշելով.

Այսպէս արագ՝ 'ի թեթև
Մոռացմանէն թըմբրեալ սէրն
Անմահանայ, և դրաւէ
Զահարեկեալ ըզհոգին,
Եւ ըզպատկերան հեռացեալս
Դարձուցանէ առ հին ցաւս։

Մերժեալ 'ի մտացդ հոգածու
Զերկրաւոր իղձս, ով ազնիւ.
Խորհուրդ մ'ամբիծ նուիրաձիր
Հան առ Անմահն, և մեռիր.
Ցերկիրն՝ յորում ծածկեսցին
Փափկասընունդ քո նըշխարք,

Նըրնջեն և այլք եղկելիք,
Ծընգեալք ծիւրեալք 'ի ցաւոց.
Հարսունք 'ի սրոյ որբացեալք,
Եւ կոյսք 'ի զուր խօսեցեալք.
Մարք որք զորդեակսըն տեսին
Սուսերահարս և տըխեղծ։

Ի Փառապարտ յաղթէ զքեզ
Բըռնաւորացըն սերեալ,
Որոց՝ թիւն էր քաջութիւն,
Եւ իրաւունք քէն վրիժու,
Հեղուլն արիւն՝ ուղղութիւն,
Եւ փառք՝ լինելն անօղորմ,

Ըզքեզ 'ի մէջ ճըռնչելոց

digitised by A.R.A.R.@

Եղին արկածք խորագէտք .
Մեռի՛ր խաղաղ ն՚արտասուեալ .
Եւ էջ նընջել ընդ նոսին .
Ցանդատապարտ 'ի մոխիր
Ոչ ոք դիցէ թըշնամանս ։

Մեռի՛ր , և դէմքդ անկենդան
Ամփոփեսցին յանդորրու ,
Որպէս երբեմն , որ անփորձ
Խաբեպատիր ապառնոյն
Կուսական մեղմ խորհըրդոք
Նըկարէին լոկ միայն ։

Սապէս յամպոց փեռեկեալ
Պարզի արև մերձ 'ի մայրն ,
Եւ 'ի թիկունըս լերին
Կարմրէ շղողշող արևմուտս .
Գուշակ գեղջկին բարեմոյն
Պայծառագոյն ևս աւուր ։

Թարգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՂԱՍԴԱՆՑԻՒ

digitised by A.R.A.R.@